Ժողովուրդ

Հասցեն՝ Երևան, Աբովյան 22ա/3
Հեռախոս/ֆաքս. 010 54 64 23
Կայք՝ www. armlur.am
Էլ փոստ info.armlur@gmail.com
info.zhoghovurd@gmail.com

Լոռու մարզպետ

Արամ Խաչատրյանին

«Ժողովուրդ» օրաթերթի լրագրող

Մարիամ Ղազարյանից

Հարցում

Հարգելի՛ պարոն Խաչատրյան, համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ պատասխանել հետեւյալ հարցերին՝

ՀՀ Կառավարությունը սեպտեմբերի 28-ի նիստի ընթացքում որոշեց գումար հատկացնել ՀՀ մարզպետների աշխատակազմերին՝ Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված քաղաքացիներին առաջին անհրաժեշտության պարենային և ոչ պարենային ապրանքների հրատապ ձեռքբերման և գնումների ֆինանսավորումն ապահովելու նպատակով: Մասնավորապես՝Լոռու մարզին տրամադրվեց 30 մլն դրամ:

1. Ստացված գումարի որքա՞ն մասն է օգտագործվել մինչ օրս:

2. Օգտագործված գումարից կոնկրետ ի՞նչ ծախսեր են արվել, խնդրում ենք տրամադրել ծախսերի բացվածքը՝ ի՞նչ ծառայություն է մատուցվել, որքա՞ն գումար է վճարվել և ո՞վ կամ ի՞նչ ընկերություն է այն մատուցել ծառայությունը (նաեւ կցել հաշիվ ապրանաքգրերը):

3. Քանի՞ արցախցի է օգտվել այդ ծառայություններից:

4. Քանի՞ արցախցի չի կարողցել օգտվել այդ ծառայություններից և ինչու՞:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ
31.10.2023